

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի
ԹԻՎ 261/2004 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

Փոխադրման մերժման, չվերթները չեղարկելու կամ հետաձգելու հետ կապված ուղևորների փոխհատուցման և օգնության ընդհանուր կանոնների հաստատման, ինչպես նաև թիվ 295/91 կանոնակարգը ուժը կորցրած ճանաչելու մասին

Եվրոպական խորհրդարանը և Եվրոպական միության խորհուրդը,

Հաշվի առնելով Եվրոպական համայնքի ստեղծման պայմանագիրը, և մասնավորապես դրա 80-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես նաև Հանձնաժողովի առաջարկը¹ և Եվրոպական տնտեսական և սոցիալական հանձնաժողովի կարծիքը², Շրջանների հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո, գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով³ սահմանված կարգին համապատասխան՝ 2003 թվականի դեկտեմբերի 1-ին Հաշտեցման հանձնաժողովի կողմից հաստատված համատեղ տեքստի լույսի ներքո,

Մինչդեռ:

1. Օդային փոխադրումների ոլորտում Համայնքի կողմից իրականացվող գործողությունները պետք է ուղղված լինեն, ի թիվս այլոց, ուղևորների պաշտպանվածության բարձր մակարդակի ապահովմանը: Ավելին, անհրաժեշտ է ամբողջապես հաշվի առնել սպառողների պաշտպանության պահանջները:

2. Փոխադրումների մերժումը և չվերթների չեղարկումը կամ երկար հետաձգումը լուրջ անհանգստություն և անհարմարություն են առաջացնում ուղևորների համար:

3. Չնայած Խորհրդի՝ 1991թ. փետրվարի 4-ի թիվ 295/91 (EEC) «Ավիացիոն տրանսպորտում մերժված փոխադրումների փոխհատուցման համակարգի ընդհանուր կանոններ սահմանող կանոնակարգը»⁴ ստեղծում է հիմնական պաշտպանություն ուղևորների համար, այնուամենայնիվ իրենց կամքին հակառակ մերժված փոխադրումներով ուղևորների թիվը շարունակում է մնալ չափազանց մեծ, ինչը պայմանավորված է չվերթի՝ առանց նախազգուշացման չեղարկումներով և հետաձգումներով:

4. Հետևաբար, Համայնքը պետք է բարձրացնի այդ կանոնակարգով սահմանված պաշտպանության չափանիշները ինչպես ուղևորների իրավունքները ամրապնդելու, այնպես էլ վստահ լինելու համար, որ ավիափոխադրողները ազատականացված շուկայում գործում են ներդաշնակ պայմաններում:

¹ Տե՛ս OJ C 103 E, 30.4.2002, p. 225 and OJ C 71 E, 25.3.2003, էջ 188.

² Տե՛ս OJ C 241, 7.10.2002, էջ 29.

³ Տե՛ս Opinion of the European Parliament of 24 October 2002 (OJ C 300 E, 11.12.2003, էջ 443), Council Common Position of 18 March 2003 (OJ C 125 E, 27.5.2003, էջ 63) and Position of the European Parliament of 3 July 2003.

Legislative Resolution of the European Parliament of 18 December 2003 and Council Decision of 26 January 2004.

⁴ OJ L 36, 8.2.1991, էջ 5.

5. Քանի որ կանոնավոր և ոչ կանոնավոր ավիափոխադրումների միջև տարբերությունը գնալով նվազում է, պաշտպանությունը պետք է տարածվի ոչ միայն կանոնավոր, այլ նաև ոչ կանոնավոր չվերթով փոխադրվող ուղևորների վրա, ներառյալ՝ նրանց, որոնք կազմում են տուր փաթեթի մի մասը:

6. Անդամ պետության օդանավակայանից մեկնող ուղևորներին տրվող պաշտպանությունը պետք է տարածվի նաև այն անձանց վրա, ովքեր մեկնում են երրորդ պետության օդանավակայանից, սակայն անդամ պետության տարածքում սահմանված չվերթով, երբ Համայնքի փոխադրողն է իրականացնում չվերթը:

7. Սույն կանոնակարգի արդյունավետ կիրառությունն ապահովելու համար դրանով սահմանված պարտավորությունները պետք է դրվեն գործող ավիափոխադրողի վրա, ով իրականացնում կամ մտադիր է չվերթ իրականացնել՝ լինի դա իրեն սեփականության իրավունքով պատկանող, «չոր» կամ «թաց» վարձակալության տակ գտնվող ինքնաթիռներով կամ որևէ այլ հիմքով:

8. Սույն կանոնակարգը չպետք է սահմանափակի ցանկացած, այդ թվում՝ երրորդ անձանցից փոխհատուցում պահանջելու գործող ավիափոխադրողի իրավունքը՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

9. Իրենց կամքին հակառակ փոխադրման մերժում ստացած ուղևորների թիվը պետք է կրճատվի՝ ավիափոխադրողին պարտավորեցնելով փոխադրումը մերժելու փոխարեն կոչ անել անձանց կամավոր հրաժարվել իրենց ամրագրումներից՝ որոշակի արտոնություն ստանալու դիմաց և ամբողջությամբ հատուցել այն անձանց, ովքեր վերջնականապես հրաժարվել են չվերթից:

10. Իրենց կամքին հակառակ փոխադրման մերժում ստացած ուղևորները պետք է հնարավորություն ունենան կա՛մ չեղարկելու իրենց չվերթները՝ տոմսերի արժեքը փոխհատուցելու պայմանով, կա՛մ շարունակել այն բավարար պայմաններով, ընդ որում՝ հետաձգված թռիչքին սպասելու ընթացքում անհրաժեշտ է սահմանված կարգով նրանց տրամադրել խնամք:

11. Կամավորները նույնպես պետք է հնարավորություն ունենան չեղարկելու իրենց չվերթները՝ տոմսերի արժեքը փոխհատուցելու պայմանով, կամ շարունակել այն բավարար պայմաններով, քանի որ իրենց կամքին հակառակ մերժում ստացած անձանց նման նրանք նույնպես բախվում են փոխադրման դժվարությունների հետ:

12. Չվերթների հետաձգման և չեղարկման հետևանքով ուղևորների անհանգստությունն ու անհարմարությունը նույնպես պետք է նվազեցվի: Դա պետք է իրականացվի՝ պարտավորեցնելով ավիափոխադրողներին տեղեկացնել ուղևորներին չեղարկման մասին նախքան մեկնման համար նախատեսված ժամը և բացի այդ, նրանց առաջարկել երթուղու փոփոխման ողջամիտ տարբերակ, որպեսզի վերջիններս կարողանան այլ պայմանավորվածություններ ձեռք բերել: Հակառակ դեպքում, ավիափոխադրողները պետք է

փոխհատուցեն ուղևորներին, բացառությամբ այն դեպքերի, երբ չեղարկումը տեղի է ունեցել արտակարգ իրավիճակում, որից հնարավոր չէր խուսափել նույնիսկ բոլոր ողջամիտ միջոցները ձեռնարկելու դեպքում:

13. Ուղևորները, ում չվերթները չեղարկվել են, պետք է իրավունք ունենան ստանալու կա՛մ տոմսերի արժեքի փոխհատուցում, կա՛մ երթուղու փոփոխում բավարար պայմաններով, ընդ որում՝ հետաձգված թռիչքին սպասելու ընթացքում անհրաժեշտ է սահմանված կարգով նրանց տրամադրել խնամք:

14. Մոնրեալի կոնվենցիայի համաձայն՝ գործող ավիափոխադրողների պարտավորությունները պետք է սահմանափակվեն կամ բացառվեն այն ժամանակ, երբ դեպքը պայմանավորված է եղել արտակարգ հանգամանքներով, որոնցից հնարավոր չէր խուսափել, նույնիսկ եթե ձեռնարկվեին բոլոր ողջամիտ միջոցները: Մասնավորապես, նման հանգամանքներ կարող են առաջանալ քաղաքական անկայունության, չվերթի իրականացման հետ անհամատեղելի օդերևութաբանական պայմանների, անվտանգության ռիսկերի կամ անսպասելի թերությունների և գործադուլների դեպքում, որոնք ազդում են գործող ավիափոխադրողի գործունեության վրա:

15. Պետք է հաշվի առնել, որ լինում են արտակարգ իրավիճակներ, երբ կոնկրետ օրը կոնկրետ ինքնաթիռի կապակցությամբ ավիափոխադրման իրականացման որոշումը հանգեցնում է երկարատև (գիշերային) հետաձգման, կամ այդ ինքնաթիռով մեկ կամ մի քանի չվերթների չեղարկման, նույնիսկ եթե ավիափոխադրողի կողմից ձեռնարկվել են բոլոր ողջամիտ միջոցները՝ հետաձգումներից կամ չեղարկումներից խուսափելու նպատակով:

16. Սույն կանոնակարգը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ տուր փաթեթը չեղարկվել է չվերթի չեղարկումից տարբեր պատճառներով:

17. Ուղևորները, ում չվերթները հետաձգվել են որոշակի ժամանակով, պետք է ողջամիտ խնամքի արժանանան և հնարավորություն ունենան չեղարկել իրենց չվերթները՝ տոմսերի արժեքի փոխհատուցմամբ կամ շարունակել այն բավարար պայմաններով:

18. Այլընտրանքային կամ հետաձգված չվերթի սպասող ուղևորների խնամքը կարող է սահմանափակվել կամ մերժվել, եթե ինքնին խնամքի տրամադրումը կարող է հետաձգման պատճառ հանդիսանալ:

19. Գործող ավիափոխադրողները պետք է բավարարեն շարժվելու սահմանափակ կարողություններ ունեցող և նրանց ուղեկցող անձանց առանձնահատուկ պահանջումները:

20. Ուղևորները պետք է լիովին տեղեկացված լինեն փոխադրման մերժման, չվերթները չեղարկելու կամ հետաձգելու դեպքերում իրենց իրավունքների մասին, որպեսզի կարողանան արդյունավետորեն իրականացնել դրանք:

21. Անդամ պետությունները պետք է սահմանեն սույն կանոնակարգի դրույթների խախտումների համար կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ կանոններ և ապահովեն դրանց կիրառումը: Պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և զսպող:

22. Անդամ պետությունները պետք է ապահովեն և վերահսկեն իրենց ավիափոխադրողների կողմից սույն կանոնակարգի դրույթների պահպանումը և նշանակեն համապատասխան մարմին այդպիսի իրավակիրառ գործունեություն իրականացնելու համար: Վերահսկումը չպետք է ազդի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով ուղևորների և ավիափոխադրողների՝ դատական պաշտպանություն ստանալու իրավունքի իրականացման վրա:

23. Հանձնաժողովը պետք է վերլուծի սույն կանոնակարգի կիրառումը, մասնավորապես՝ գնահատի բոլոր այն ուղևորների վրա դրա տարածման հնարավորությունը, ովքեր ունեն պայմանագիր տուր օպերատորի կամ Համայնքի փոխադրողի հետ, երրորդ պետության օդանավակայանից անդամ պետության օդանավակայան մեկնելիս:

24. Ջիբլաթարի օդանավակայանի օգտագործման հետ կապված ավելի մեծ համագործակցության պայմանավորվածություններ են ձեռք բերվել Լոնդոնում՝ 1987 թվականի դեկտեմբերի 2-ին Իսպանիայի Թագավորության և Միացյալ Թագավորության կողմից երկու երկրների արտաքին գործերի նախարարների համատեղ հռչակագրով: Այդ պայմանավորվածությունները դեռևս ուժի մեջ չեն մտել:

25. EEC 295/91 կանոնակարգը պետք է համապատասխանաբար ուժը կորցրած ճանաչվի, Ընդունեցին թիվ 261/2004 կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ):

Հոդված 1.

Առարկան

1. Սույն կանոնակարգը սահմանում է ուղևորների համար նվազագույն իրավունքներ հետևյալ դեպքերում՝

- ա. փոխադրումը մերժվել է ուղևորի կամքին հակառակ,
- բ. փոխադրումը չեղարկվել է,
- գ. փոխադրումը հետաձգվել է:

2. Ջիբլաթարի օդանավակայանի նկատմամբ սույն կանոնակարգի կիրառումը վնաս չի հասցնում Իսպանիայի Թագավորության և Միացյալ Թագավորության համապատասխան իրավական դիրքերին օդանավակայանի տեղակայման տարածքի սուվերենության կապակցությամբ վեճի առաջացման դեպքերում:

3. Ջիբլաթարի օդանավակայանի նկատմամբ սույն կանոնակարգի կիրառումը կասեցվում է մինչև Իսպանիայի Թագավորության և Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարների 1987 թվականի դեկտեմբերի 2-ի համատեղ հռչակագիրը պարունակող պայմանագրերը ուժի մեջ մտնելը: Իսպանիայի և Միացյալ Թագավորության կառավարությունները Խորհրդին կտեղեկացնեն ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

Հոդված 2.

Սահմանումներ

Սույն Կանոնակարգի նպատակների համար՝

ա) «ավիափոխադրող»-օդային փոխադրումներ իրականացնող ընկերություն, որն ունի այդպիսի գործունեություն իրականացնելու վավեր լիցենզիա,

բ) «գործող ավիափոխադրող»-ավիափոխադրող, որն իրականացնում կամ մտադիր է չվերթ իրականացնել ուղևորի հետ կնքած պայմանագրի հիման վրա կամ այլ անձի անունից (ֆիզիկական կամ իրավաբանական), ով ունի պայմանագիր այդ ուղևորի հետ,

գ) «Համայնքի փոխադրող»-ավիափոխադրող, որն ունի գործունեության վավեր լիցենզիա՝ տրված անդամ պետության կողմից, Խորհրդի՝ 1992 թվականի հուլիսի 23-ի «Ավիափոխադրողների լիցենզավորման մասին» թիվ 2407/92 կանոնակարգի դրույթներին համապատասխան¹,

դ) «տուր օպերատոր»-կազմակերպիչ, բացառությամբ ավիափոխադրողի, Խորհրդի՝ 1990 թվականի հունիսի 13-ի փաթեթային ճանապարհորդության, արձակուրդների և տուրերի մասին 90/314/EEC հրահանգի 2-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով²,

ե) «փաթեթ»-վերոնշյալ 90/314/EEC հրահանգի 2-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ծառայություններ,

զ) «տոմս»-վավեր փաստաթուղթ, որը տալիս է տրանսպորտի իրավունք, կամ որևէ համարժեք ոչ թղթային (ներառյալ՝ էլեկտրոնային) տեսքով հավաստում՝ տրված կամ լիազորված ավիափոխադրողի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից,

է) «ամրագրում»-փաստ, որ ուղևորն ունի տոմս կամ այլ ապացույց, ինչը ցույց է տալիս, որ ամրագրումն ընդունվել և գրանցվել է ավիափոխադրողի կամ տուր օպերատորի կողմից,

ը) «վերջնական նպատակակետ»-հաշվառման (check-in counter) ներկայացված տոմսի նպատակակետը, կամ չվերթների անմիջական կապի դեպքում՝ վերջին չվերթի նպատակակետը: Այլընտրանքային կապող չվերթները հաշվի չեն առնվում, եթե ժամանումը իրականացվում է նախապես պլանավորված ժամին,

թ) «շարժվելու սահմանափակ կարողություններ ունեցող անձ»-անձ, որի շարժունակությունը սահմանափակվում է տրանսպորտային միջոցներ օգտագործելիս ցանկացած ֆիզիկական հաշմանդամության (զգայական կամ լոկոմոտորական, մշտական կամ ժամանակավոր), մտավոր խանգարման, տարիքի կամ հաշմանդամության ցանկացած այլ պատճառով, և ում կարգավիճակը հատուկ ուշադրության և բոլոր ուղևորներին մատուցվող ծառայություններին անձի պահանջունքների ադապտացիայի կարիք ունի,

ժ) «փոխադրման մերժում»-ուղևորներին փոխադրելուց հրաժարվելը, չնայած նրանք ներկայացել են չվերթի՝ 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմաններով,

¹Տե՛ս OJ L 240, 24.8.1992, էջ 1.

²Տե՛ս OJ L 158, 23.6.1990, էջ 59

բացառությամբ այն դեպքերի, երբ մերժման համար կան ողջամիտ պատճառներ (առողջական, անվտանգության, փաստաթղթերի անհամապատասխանության),

ժ) «կամավոր»-անձ, ով ներկայացել է չվերթի՝ 3-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմաններով, և դրական է արձագանքում ավիափոխադրողի՝ այն ուղևորներին ուղղված կոչին, ովքեր պատրաստ են հրաժարվել իրենց ամրագրումից որոշակի արտոնություն ստանալու դիմաց,

ժբ) «չեղարկում»-նախապես պլանավորված չվերթի չիրականացումը, որում առնվազն մեկ տեղ ամրագրված էր:

Հոդված 3.

Կարգավորման ոլորտը

1. Սույն կանոնակարգը կիրառվում է՝

ա) այն անդամ պետությունների տարածքում գտնվող օդանավակայանից մեկնող ուղևորների նկատմամբ, որոնց վրա տարածվում է Պայմանագիրը,

բ) երրորդ պետության տարածքում գտնվող օդանավակայանից անդամ պետության օդանավակայան մեկնող ուղևորների նկատմամբ, որոնց վրա տարածվում է Պայմանագիրը, բացառությամբ այն դեպքերի, եթե նրանք ստացել են արտոնություն կամ փոխհատուցում և օգնություն այդ երրորդ պետությունում, եթե չվերթի գործող ավիափոխադրողը հանդիսանում է Համայնքի փոխադրող:

2. Սույն հոդվածի 1-ին կետը կիրառվում է այն դեպքում, երբ ուղևորները՝

ա) ունեն համապատասխան չվերթի հաստատված ամրագրում, և, բացառությամբ 5-րդ հոդվածով սահմանված չեղարկման դեպքերի, համապատասխան պայմաններով նախապես և գրավոր տեսքով (ներառյալ՝ էլեկտրոնային) ավիափոխադրողի, տուր օպերատորի կամ լիազոր ներկայացուցչի կողմից սահմանված ժամանակին ներկայացել են հաշվառման, կամ, եթե ժամը նշված չէ, մեկնելու հրապարակված ժամից ոչ ուշ քան 45 րոպե շուտ, կամ

բ) ավիափոխադրողի կամ տուր օպերատորի կողմից իրենց ամրագրած չվերթից տեղափոխվել են մեկ այլ չվերթ՝ անկախ պատճառներից:

3. Սույն կանոնակարգը չի կիրառվում այն ուղևորների նկատմամբ, ովքեր ուղևորությունը իրականացնում են անվճար կամ իջեցված ուղեվարձով, ինչը ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելի չէ հանրությանը: Սակայն, դա վերաբերում է այն ուղևորներին, ովքեր ունեն ավիափոխադրողի կամ տուր օպերատորի կողմից հաճախակի թռիչքային ծրագրի կամ այլ առևտրային ծրագրի շրջանակներում թողարկվող տոմսեր:

4. Սույն կանոնակարգը կիրառվում է միայն այն ուղևորների նկատմամբ, ովքեր փոխադրվում են շարժիչային ֆիքսված թևով ինքնաթիռներով:

5. Սույն կանոնակարգը կիրառվում է ցանկացած գործող ավիափոխադրողի նկատմամբ, որն իրականացնում է 1-ին և 2-րդ կետերով սահմանված ուղևորափոխադրումներ: Եթե գործող

ավիափոխադրողը, ով չունի պայմանագիր ուղևորի հետ, իրականացնում է սույն կանոնակարգով սահմանված պարտականությունները, ապա նա համարվում է այն անձի անունից գործող, ով ունի պայմանագիր տվյալ ուղևորի հետ:

6. Սույն կանոնակարգը չի ազդում ուղևորների՝ 90/314/EEC հրահանգով սահմանված իրավունքների վրա: Սույն կանոնակարգը չի կիրառվում այն դեպքերում, երբ տուր փաթեթը չեղարկվում է չվերթի չեղարկումից տարբեր պատճառներով:

Հոդված 4.

Փոխադրման մերժում

1. Այն դեպքում, երբ գործող ավիափոխադրողը ակնկալում է ողջամտորեն մերժել փոխադրումը, նա պետք է առաջին հերթին կոչ անի կամավորներին հրաժարվել իրենց ամրագրումներից որոշակի արտոնությունների դիմաց, տվյալ ուղևորի և ավիափոխադրողի փոխադարձ համաձայնությամբ սահմանված պայմաններով: Կամավորներին տրվում է 8-րդ հոդվածով սահմանված օգնություն, ընդ որում՝ այդ օգնությունը տրվում է ի հավելումն սույն հոդվածով սահմանված արտոնությունների:

2. Եթե նախապես ամրագրում կատարած մնացած ուղևորներին մեկնելու հնարավորություն տվող կամավորների թիվը անբավարար է, ապա գործող ավիափոխադրողը կարող է մերժել փոխադրումը ուղևորների կամքին հակառակ:

3. Եթե փոխադրումը մերժվել է ուղևորների կամքին հակառակ, գործող ավիափոխադրողը պետք է անմիջապես տրամադրի նրանց 7-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում և 8-րդ և 9-րդ հոդվածներով սահմանված օգնություն:

Հոդված 5.

Չվերթի չեղարկում

1. Չվերթի չեղարկման դեպքում գործող ավիափոխադրողը պետք է՝

- ա) ուղևորներին առաջարկի տրամադրել օգնություն 8-րդ հոդվածին համապատասխան,
- բ) ուղևորներին առաջարկի տրամադրել օգնություն 9-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետին և 2-րդ կետին համապատասխան, ինչպես նաև երթուղու փոփոխման դեպքում, երբ նոր չվերթի մեկնելու ողջամտորեն ակնկալվող ժամը հանդիսանում է նվազագույնը մեկնելուց հետո հաջորդ օրը, ինչպես այն պլանավորվել էր չեղարկված չվերթի համար, տրամադրել օգնություն 9-րդ հոդվածի 1-ին կետի բ) և գ) ենթակետերին համապատասխան,
- գ) ուղևորները գործող ավիափոխադրողի կողմից հատուցման իրավունք ունեն 7-րդ հոդվածի համաձայն, եթե՝

- նրանք տեղեկացվել են չեղարկման մասին մեկնելու նախատեսված ժամանակից առնվազն երկու շաբաթ առաջ, կամ

- նրանք տեղեկացվել են չեղարկման մասին մեկնելու նախատեսված ժամանակից երկու շաբաթ և 7 օր առաջ, և նրանց առաջարկվել է երթուղու փոփոխում, որը թույլ կտա մեկնել նախատեսված ժամանակից ոչ ավել, քան 2 ժամ առաջ և հասնել իրենց վերջնական նպատակակետին ավելի շուտ, քան ժամանման նախատեսված ժամանակից 4 ժամ առաջ, կամ

- նրանք տեղեկացվել են չեղարկման մասին մեկնելու նախատեսված ժամանակից ավելի քիչ, քան 1 շաբաթ առաջ և նրանց առաջարկվել է երթուղու փոփոխում, որը թույլ կտա մեկնել նախատեսված ժամանակից ոչ ավել, քան 1 ժամ առաջ և հասնել իրենց վերջնական նպատակակետին ավելի շուտ, քան ժամանման նախատեսված ժամանակից 2 ժամ առաջ:

2. Երբ ուղևորներին տեղեկացվում է չեղարկման մասին, տեղեկատվություն է տրվում հնարավոր այլընտրանքային տրանսպորտի վերաբերյալ:

3. Գործող ավիափոխադրողը կազատվի 7-րդ հոդվածի համաձայն փոխհատուցում վճարելու պարտականությունից, եթե կարողանա ապացուցել, որ չեղարկումը պայմանավորված է եղել արտակարգ հանգամանքներով, որոնցից հնարավոր չէր խուսափել, նույնիսկ եթե բոլոր ողջամիտ միջոցները ձեռնարկվեին:

4. Այն հարցերի վերաբերյալ ապացուցման բեռը, թե արդյոք ուղևորին տեղեկացվել է և երբ է տեղեկացվել չվերթը չեղարկելու մասին, դրվում է գործող ավիափոխադրողի վրա:

Հոդված 6.

Չվերթի հետաձգում

1. Այն դեպքում, երբ գործող ավիափոխադրողը ողջամտորեն ակնկալում է, որ թռիչքը հետաձգվելու է իր մեկնման նախատեսված ժամից ավելի՝

ա) 2 ժամ և ավելի մինչև 1500 կմ չվերթի դեպքում,

բ) երեք ժամ կամ ավելի 1500 կմ-ից ավել ներքին չվերթների դեպքում և այլ մնացած 1 500-3 500 կմ չվերթների դեպքում,

գ) չորս ժամ կամ ավելի այն բոլոր թռիչքների դեպքում, որոնք չեն ընկնում ա) կամ բ) ենթակետերի տակ,

ավիափոխադրողը ուղևորներին պետք է առաջարկի՝

- 9-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետով և 9-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված օգնությունը, և

- երբ ողջամտորեն ակնկալվող մեկնման ժամանակը նախապես հայտարարված մեկնելու օրվա առնվազն հաջորդ օրն է, օգնություն 9-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետին և 9-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետին համապատասխան,

- երբ հետաձգումը առնվազն հինգ ժամ է, 8-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետով սահմանված օգնությունը:

2. Ամեն դեպքում, օգնությունը պետք է առաջարկվի վերը նշված ժամկետներում յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար սահմանված կարգով:

Հոդված 7.

Փոխհատուցման իրավունք

1. Եթե հղում է կատարվում սույն հոդվածին, ուղևորները պետք է ստանան փոխհատուցում, որը կազմում է՝

ա) 250 եվրո՝ մինչև 1500 կմ բոլոր չվերթների դեպքում,

բ) 400 եվրո՝ բոլոր ներքին 1500 կմ-ից ավելի չվերթների դեպքում, ինչպես նաև մնացած բոլոր 1500-3500 կմ չվերթների դեպքում,

գ) 600 եվրո՝ բոլոր այլ չվերթների դեպքում, որոնք չեն ընկնում ա) և բ) ենթակետերի տակ:

Հեռավորությունը որոշելիս հիմք պետք է ընդունվի այն վերջին նպատակակետը, որտեղ փոխադրման մերժումը կամ չեղարկումը կհետաձգի ուղևորի ժամանումը նախատեսված ժամից հետո:

2. Այն դեպքում, երբ ուղևորներին առաջարկվում է փոխել երթուղին այլընտրանքային չվերթով՝ համաձայն 8-րդ հոդվածի, որի ժամանման պահը չի գերազանցում թռիչքի նախապես ամրագրված ժամանման պահը՝

ա) 2 ժամով՝ մինչև 1500 կմ բոլոր չվերթների դեպքում,

բ) 3 ժամով՝ բոլոր ներքին 1500 կմ-ից ավելի չվերթների դեպքում, ինչպես նաև մնացած բոլոր 1500-3500 կմ չվերթների դեպքում,

գ) 4 ժամով՝ բոլոր այլ չվերթների դեպքում, որոնք չեն ընկնում ա) և բ) ենթակետերի տակ,

գործող ավիափոխադրողը կարող է 50%-ով կրճատել 1-ին կետով նախատեսված փոխհատուցումը:

3. 1-ին կետում նշված փոխհատուցումը վճարվում է կանխիկ եղանակով՝ էլեկտրոնային բանկային փոխանցմամբ, բանկային օրդերներով, չեկերով կամ ուղևորի հետ կնքված համաձայնագրով, ճանապարհորդական վաուչերներով և/կամ այլ ծառայություններով:

4. 1-ին և 2-րդ կետերում նշված հեռավորությունները չափվում են մեծ շրջանի երթուղու մեթոդով:

Հոդված 8.

Փոխհատուցման կամ երթուղու փոփոխման իրավունք

1. Եթե հղում է կատարվում սույն հոդվածին, ուղևորներին առաջարկվում են ընտրության հետևյալ հնարավորությունները՝

ա) յոթ օրվա ընթացքում փոխհատուցում ստանալ 7-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված միջոցներով, տոմսի ամբողջական արժեքի չափով, որով այն գնվել է, չվերթի չկատարված մասի կամ մասերի, և արդեն կատարված մասի կամ մասերի համար, եթե չվերթը այլևս չի ծառայում ուղևորի նախապես ունեցած նպատակներին, ինչպես նաև

անհրաժեշտության դեպքում հետադարձ թռիչք դեպի չվերթի սկզբնական կետը առաջին իսկ հնարավորության դեպքում,

բ) համարժեք տրանսպորտային պայմաններով փոխել երթուղին դեպի վերջնական նպատակակետը առաջին իսկ հնարավորության դեպքում, կամ

գ) համարժեք տրանսպորտային պայմաններով փոխել երթուղին դեպի վերջնական նպատակակետը ավելի ուշ՝ ուղևորի հարմարավետության համար, համապատասխան տեղի առկայության դեպքում:

2. 1-ին կետի ա) ենթակետը կիրառվում է այն ուղևորների նկատմամբ, ում չվերթը մտնում է փաթեթի մեջ, բացառությամբ փոխհատուցման իրավունքի, եթե այդպիսի իրավունք առաջանում է՝ համաձայն 90/314/EEC հրահանգի:

3. Այն դեպքում, երբ տվյալ քաղաքը կամ տարածաշրջանը սպասարկում են մի քանի օդանավակայաններ, գործող ավիափոխադրողն ուղևորին առաջարկում է թռիչք դեպի օդանավակայան, որպես այլընտրանքային տարբերակ նրան, որի համար ամրագրումը կատարվել էր, և գործող ավիափոխադրողը կրում է ուղևորին այդ այլընտրանքային օդանավակայանից տեղափոխելու ծախսերը դեպի այնտեղ, որի համար ամրագրումը կատարվել էր կամ ուրիշ ամենամոտ նպատակակետը՝ համաձայնեցնելով ուղևորի հետ:

Հոդված 9.

Խնամքի իրավունք

1. Եթե հղում է կատարվում սույն հոդվածին, ուղևորներին անվճար առաջարկվում է՝
ա) սնունդ և թարմացնող ըմպելիքներ՝ սպասելու ժամանակահատվածին համաչափ,
բ) տեղավորում հյուրանոցում այն դեպքերում, երբ անհրաժեշտ է մեկ կամ մի քանի գիշեր մնալ, կամ երբ ուղևորի նախատեսածից ավել մնալը դառնում է անհրաժեշտ,

գ) օդանավակայանի և բնակության վայրի (հյուրանոց կամ այլ) միջև տրանսպորտ:

2. Բացի այդ, ուղևորներին անվճար առաջարկվում է երկու հեռախոսազանգ, տելեքս, ֆաքսային հաղորդագրություն կամ էլ. փոստ:

3. Սույն հոդվածի կիրառման ժամանակ գործող ավիափոխադրողն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում շարժվելու սահմանափակ կարողություններ ունեցողների և նրանց ուղեկցող անձանց, ինչպես նաև ուղեկցորդ չունեցող երեխաների կարիքներին:

Հոդված 10.

Բարձրացում և իջեցում

1. Եթե գործող ավիափոխադրողը ուղևորին նստեցնում է ավելի բարձր կարգ քան այն, որի համար ձեռք է բերվել տոմսը, նա չի կարող դրա համար պահանջել որևէ լրացուցիչ վճար:

2. Եթե գործող ավիափոխադրողը ուղևորին նստեցնում է ավելի ցածր կարգ քան այն, որի համար ձեռք է բերվել տոմսը, նա պարտավոր է 7 օրվա ընթացքում 7-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված միջոցներով, փոխհատուցել՝

ա) մինչև 1500 կմ բոլոր չվերթների համար տոմսի արժեքի 30%-ը, կամ

բ) 1500 կմ-ից ավել ներքին բոլոր չվերթների տոմսի արժեքի 50%-ը՝ բացառությամբ անդամ պետությունների Եվրոպական տարածաշրջանի և Ֆրանսիայի արտասահմանյան գերատեսչությունների և մնացած բոլոր այլ չվերթների համար 1500-3500 կմ-ի սահմաններում, կամ

գ) ա) կամ բ) ենթակետերի տակ չընկնող մնացած բոլոր չվերթների համար տոմսի գնի 75%-ը, ներառյալ՝ անդամ պետությունների Եվրոպական տարածաշրջանի և Ֆրանսիայի արտասահմանյան գերատեսչությունների միջև իրականացվող չվերթների համար:

Հոդված 11.

Շարժվելու սահմանափակ կարողություններ և հատուկ կարիքներ ունեցող անձինք

1. Գործող ավիափոխադրողները առաջնահերթություն են տալիս շարժվելու սահմանափակ կարողություններ ունեցող անձանց տեղափոխողներին կամ այլ ցանկացած անձին կամ սերտիֆիկացված ծառայողական շներին, ովքեր ուղեկցում են նրանց, ինչպես նաև ուղեկցորդ չունեցող երեխաներին:

2. Փոխադրման մերժման, չվերթները չեղարկելու կամ հետաձգելու դեպքերում շարժվելու սահմանափակ կարողություններ ունեցող և նրանց ուղեկցող անձինք, ինչպես նաև ուղեկցորդ չունեցող երեխաները, ունեն խնամքի իրավունք հնարավորինս սեղմ ժամկետում՝ 9-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 12.

Հետագա փոխհատուցում

1. Սույն կանոնակարգը կիրառվում է առանց վնասելու ուղևորի՝ հետագա փոխհատուցման իրավունքը: Սույն կանոնակարգով տրվող փոխհատուցումը կարող է հանվել այդպիսի փոխհատուցումից:

2. Առանց վնասելու ազգային օրենսդրության համապատասխան սկզբունքներն ու կանոնները, այդ թվում՝ նախադեպային իրավունքը, 1-ին կետը չի տարածվում այն ուղևորների վրա, ովքեր կամավոր կերպով հրաժարվել են իրենց ամրագրումներից 4-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

Հոդված 13.

Փոխհատուցման իրավունք

Այն դեպքում, երբ գործող ավիափոխադրողը տրամադրում է փոխհատուցում կամ իրականացնում է սույն կանոնակարգով իր վրա դրված այլ պարտականություններ, սույն կանոնակարգով սահմանված որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած անձից, այդ թվում՝ երրորդ կողմից, կիրառելի օրենսդրությանը համապատասխան փոխհատուցում պահանջելու նրա իրավունքի սահմանափակում: Մասնավորապես, սույն կանոնակարգը որևէ կերպ չի սահմանափակում գործող ավիափոխադրողի՝ տուր օպերատորից կամ ցանկացած այլ անձից, ում հետ նա ունի պայմանագիր, փոխհատուցում ստանալու իրավունքը: Նմանապես, սույն կանոնակարգի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես տուր օպերատորի կամ երրորդ կողմի, բացառությամբ ուղևորի, ում հետ գործող ավիափոխադրողը կնքել է պայմանագիր, կիրառելի օրենսդրությանը համապատասխան գործող ավիափոխադրողից փոխհատուցում պահանջելու իրավունքի սահմանափակում:

Հոդված 14.

Ուղևորներին իրենց իրավունքների մասին տեղեկացնելու պարտականությունը

1. Գործող ավիափոխադրողը պետք է ապահովի, որ չվերթի հաշվառման ժամանակ ուղևորներին պարզ ցուցադրվի հետևյալ տեքստը պարունակող հստակ ընթերցանելի ծանուցումը. «Եթե ձեր փոխադրումը մերժվել է կամ չվերթը չեղարկվել կամ հետաձգվել է առնվազն 2 ժամով, մոտեցեք հաշվառման սեղանին (check-in counter) կամ չվերթի ելքի մոտ և խնդրեք տրամադրել ձեր իրավունքների մասին տեքստը՝ հատկապես օգնության և փոխհատուցման հետ կապված»:

2. Գործող ավիափոխադրողը, որը մերժել է փոխադրումը, չեղարկել կամ հետաձգել է չվերթը, յուրաքանչյուր տուժած ուղևորի պետք է գրավոր ծանուցում տա, որը պարունակում է սույն կանոնակարգով սահմանված հատուցման և օգնության կանոնները: Նա նաև պարտավոր է յուրաքանչյուր ուղևորի, ում չվերթը հետաձգվել է առնվազն 2 ժամով, տրամադրել համարժեք ծանուցում: 16-րդ հոդվածում նշված ազգային լիազոր մարմինը նույնպես պետք է ներկայացվի ուղևորին գրավոր տեսքով:

Հոդված 15.

Հրաժարման բացառումը

1. Ուղևորների նկատմամբ սույն կանոնակարգով սահմանված պարտականությունները չեն կարող սահմանափակվել կամ չեղարկվել, մասնավորապես՝ փոխադրման պայմանագրով նախատեսված այդ պարտականությունները բացառող կամ սահմանափակող որևէ դրույթով:

2. Եթե, այնուամենայնիվ, այդպիսի բացառող կամ սահմանափակող դրույթ է կիրառվում ուղևորի նկատմամբ, կամ եթե ուղևորը պատշաճ տեղեկացված չի եղել իր իրավունքների մասին, և այդ պատճառով ընդունել է փոխհատուցում, որը պակաս է սույն կանոնակարգով նախատեսվածից, ուղևորը դեռևս իրավունք ունի անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել

իրավասու դատարաններում կամ մարմիններում՝ լրացուցիչ փոխհատուցում ստանալու համար:

Հոդված 16.

Խախտումներ

1. Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է սույն կանոնակարգի կիրառման համար պատասխանատու մարմին իր տարածքում տեղակայված օդանավակայաններից և երրորդ պետություններից այդ օդանավակայաններ չվերթներ իրականացնելու կապակցությամբ: Անհրաժեշտության դեպքում, այդ մարմինը ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ՝ ուղևորների իրավունքների պահպանության համար: Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին սույն կետի համաձայն նշանակված մարմնի մասին:

2. Առանց վնաս հասցնելու 12-րդ հոդվածին, յուրաքանչյուր ուղևոր կարող է բողոք ներկայացնել 1-ին կետով նախատեսված կամ անդամ պետության կողմից նշանակված որևէ այլ իրավասու մարմնի սույն կանոնակարգի ենթադրյալ խախտման համար յուրաքանչյուր օդանավակայանում՝ տեղակայված անդամ պետության տարածքում կամ երրորդ պետությունից այդ տարածքում տեղակայված օդանավակայան կատարված ցանկացած չվերթի վերաբերյալ:

3. Անդամ պետությունների կողմից սույն կանոնակարգի խախտումների համար սահմանված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և զսպող:

Հոդված 17.

Ձեկույց

Հանձնաժողովը մինչև 2007 թվականի հունվարի 1-ը պետք է զեկույցի Եվրոպական խորհրդարանին և խորհրդին՝ սույն կանոնակարգի գործողության և արդյունքների մասին, մասնավորապես՝ փոխադրումների մերժման և չվերթների չեղարկման դեպքերի մասին, սույն կանոնակարգի ազդեցության շրջանակների հնարավոր ընդլայնման մասին Համայնքի փոխադրողի հետ պայմանագիր ունեցող կամ տուր փաթեթի կազմի մեջ մտնող չվերթի ամրագրում ունեցող ուղևորների համար, որոնց նկատմամբ կիրառվում է 90/314/EEC հրահանգը, և ովքեր երրորդ պետության տարածքից ուղևորվում են անդամ պետության տարածք Համայնքի ավիացիոն ընկերությունների կողմից չիրականացվող չվերթներով, 7-րդ հոդվածի 1-ին կետում նշված փոխհատուցման գումարների հնարավոր վերանայման մասին:

Անհրաժեշտության դեպքում զեկույցը պետք է ուղեկցվի նաև օրենսդրական առաջարկներով:

Հոդված 18.

Ուժը կորցնելը

Թիվ 295/91 EEC կանոնակարգը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 19.

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2005 թվականի փետրվարի 17-ից:

Սույն կանոնակարգը ենթակա է պարտադիր կատարման ամբողջապես և ուղղակիորեն կիրառվում է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Ստրասբուրգում, 2004թ. փետրվարի 11-ին:

Եվրոպական խորհրդարանի համար
Նախագահ Պ. Կոքս

Եվրոպական խորհրդի համար
Նախագահ Մ. Մկրտուչյան